№ 16 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 6 1895 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍ 6 № 16

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՉԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ կէս տարուանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուրլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2½ բուրլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер Бекъ-Назарову.

# ՉԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՉԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մին չեւ 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անդամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցների տնտեսական հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սամսոնի թեմական տեսչի վանդալականութիւնը. Նամակ Ուրմիայից. Նամակ Դավրէժից. Նամակ Խոյից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Դավրէժի կեանքից։

## ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ

### I.

Մրթէ դպրոց պահելու համար անհրաժեշտ է ամեն տարի մուրացկանութեան դիմել, ձանձրանալ—ձանձրացնել. չէ որ ժողովրդին էլ այդքան դարչարել զզուեցնել չէ կարելի՞ էլ ամիս չի լինում գրէթէ, որ հանգանակութիւններ տեղի չունենան. այսօր մի վարդապետ է գալու Թէհրան—տուէք. վաղը հարկաւոր է եկեղեցու սենեակները հինել—տուէք, միւս օրը երեցփոխանի փողն է պակասել—տուէք։ Իսկ ամեն տարի դպրոցի փողը պրծել է—տուէք։ Վերջապէս հարկաւոր է կրթական գործի համար գտնել տնտեսական այնպիսի հիմնական միջոցներ, որ ամեն նոր հնդաբարձութիւն երբ գործի գլուխ է անցնում, չստիպուի նախ մուրացկանութեամբ հնի թողած պարտքերը մարքրել, յետոյ էլ հաւաքած փողերը ոչնչացնել և յետագայ տարին էլի տնից տուն ման գալ և այդպիսով ուսումնարանը պահել։

Ժամանակ է որ դպրոցները այլ ևս չը մուրան, այլ իրենց որոշ եկամուտի աղբիւրներն ունենան։

Այնպիսի երկրներում, ուր կրթութիւնը պարտաւորիչ է, նշանակած է յայտնի կրթական տուրք, որը իւրաքանչիւր անձ պարտաւոր է վճարել։ Դպրոցով կրթութեան կարևորութիւնը և ահագին նշանակութիւնը մի երկրի զարգացման գործում, այդ երկրները տասնեակ միլիոններ են ծախսում դպրոցների վրայ. միլիոնները իբր ուղղակի տուրք։ վճարում է ժողովրդի իւրաքանչիւր անհատը, ունենայ նա որդի կամ ոչ. դրանում նա առաջնորդվում է այն մտքով որ հարկաւոր է հոգ տանել լաւ հասարակութիւն ունենալու. իսկ լաւ հասարակութիւնը դուրս է գալիս դպրոցներից։ Օրինակ Շվէյցարիան, որ միայն մօտ երկու միլիոն բնակիչ ունի՝ կրթական գործի վրայ ծախսում է տարեկան աւելի քան 32,000,000 ֆրանկ։ Նա այդ դրամը ոչ թէ մուրում է, այլ պարբերաբար ստանում է որպէս տուրք, որոշ գումարով, առանց դռնէ դուռ ընկնելու, աղաչելու և այլն. ժողովուրդն է քուէարկում այդ տուրքը և նա պարտք է համարում վճարել որպէս անհրաժեշտ կարիք լաւ քաղաքացիներ, կրթուած սերունդ ունենալու համար։

Այնպիսի երկրներում, ուր կրթութիւնը պարտաւորիչ (obligatoire) չէ այլ կամովին երբ հասարակութիւնը զգալով դպրոցի կարևորութիւնը, բաց է անում իր որդիների համար մի կրթարան—ամենից առաջ հոգ է տանում նրա տնտեսական կեանքը մշտապէս ապահովեցնելով։ ստեղծելով կամ գտնելով տնտեսական այնպիսի աղբիւրներ, որոնք կարող լինէին պարբերաբար բաշխեցնել դպրոցի համար որոշ քանակութեամբ դրամ։ Այդպէսով՝ մի անգամ ապահոված՝ նրանք աչքի առջև ունենալով իրենց դպրոցի մուտքը, ըստ այնմ էլ որոշում են մշտական ծախքը, հաստատում ուսուցիչների թիւը և այլն և այլն։ Ի՞նչ են ուրեմն այն աղբիւրները որոնք պահում են դպրոցները և այլ ևս մուրացկանութեան պէտք չեն թողնում։ Այդպիսի աղբիւրներն են 1. եկեղեցւոյ եկամուտները, 2. աշակերտների վճարած որոշ թոշակները, 3. սկզբնական մի որոշ գումար ֆոնդի՝ բերած տոկոսը, 4. պատահական նուէրներ, կտակներ և այլն։

Ուրեմն, հասարակութիւնը երբ զգում է կրթութեան կարևորութիւնը, երբ բաց է անում մի դպրոց և կամենում է որ այդ դպրոցը տայ իրենց որդոց ուսում և կրթութիւն, նա նախօրօք որոշում է եկամուտի հաստատ աղբիւրներ, ստեղծում է պարբերական տնտեսական եկամուտ և հասկանալով որ լաւ սերունդ ունենալու համար մուրացկանութիւնով պահուող դպրոցը ոչ մի հետեւանքի չի հասցնիլ—չէ վարանում եկեղեցու եկամուտներն իսկ—մինչև վերջին կոպէկը՝—յատկացնել իր որդիների կրթութեան, ուսման գործին։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԴԱՎՐԷԺԻ ԿԵԱՆՔԻՑ

Թէ «Ընթերցասիրաց» և թէ «Բարեսիրաց» ընկերութիւնները հիմնել և կառավարում են «Արամեան» դպրանոցի նախկին և այժմեան աշակերտները։ Իսկապէս ասած՝ ՁԱՅԺԷ դրանց մասին երկար կանգ առնել, որովհետև ըստ ինքեան մի առանձին բան չեն ներկայացնում, ինչպէս նաև «Սէր» ընկերութիւնը։ Այսքանս կարելի է աւելացնել, որ առաջինը՝ «Ընթերցասիրաց» ընկ.-ը նպատակ է դրել ձրի ընթերցանութիւն տարածել, որ արդէն բացել է ընթերցարան Բերդաթաղում, իսկ երկրորդը՝ «Բարեսիրաց ընկ.-ը կազմել է «Արամեան» դպրանոցի չքաւոր աշակերտներին նպաստելու թէ հագուստով և թէ դպրոցական պիտոյքներով։

Ինչպէս արդէն նրանց գոյութեան մէկ տարի ժամանակամիջոցում ցոյց տուած գործունէութիւնները ապացուցանում են, այդ փոքրիկ ընկերութիւնները—իրենց փոքրիկ նախագահներով—չօշափելի կերպով դրական օգնութիւն հասցնել չեն կարող. աւելի նպատակայարմար և աւելի օգտակար կը լինէր, որ նրանք,դրանց հետ և «Սէր» ընկերութիւնը, միանային և մի ընդհանուր—թէև ոչ զգալի—ոյժերով մի համեստ ծրագրով գործէին։

Այնպիսի ոյժերի—սրպիսիներից կազմուած են յիշեալ ընկերութիւնները—խմբակցութիւնը թերևս մի համեստ գործունէութիւն առաջ բերէր և այդպիսով ընդհանուր թեմի հայ հասարակութեան ուշադրութեան արժանանար, որով այդ հասարակութիւններն էլ—գաւառները—իրենց օգնութիւնը, աջակցութիւնը թէ նիւթական և թէ բարոյական չէին խնայիլ մեր կարծիքով։

Իսկ քանի դեռ այդպիսի ծիծաղելի ոյժերով զատ-զատ կը գործեն (իրր թէ), միշտ ծիծաղելի հետևանք կունենան։

—

Երկու թաղի, երկու «հայուհեաց» ընկերութիւնների մասին մենք արդէն ընդարձակ յօդուածով գրել ենք, այնպէս որ մեզ մնում է աւելացնել «Բերդաթաղի հայուհեաց ընկերութեան» կեանքից մի էպիզոդ՝ որը վերջերս տեղի է ունեցել այդ ընկերութեան մի ժողովում։ Ընկերութեան քարտուղարը նայելով անդամների անուանացուցակին, մէկի բացակայութեան մասին յայտնում է ժողովին։

Մէկ ուրիշ անդամուհի «բացակայ» խօսքը «վարչութեան անդամ» հասկանալով՝ տեղից բարձրանում է վիրաւորուած և ասում—«Ես էլ ես բացակայ, բա ինձ ինչու չէք կանչում»։ Թաւրէզի կանանց կեանքից առաջ քաշելով այդ ընտրոյթ կտորը, մենք նպատակ չունենք ծաղրել նրանց. նրանք ոչնչով մեղաւոր չեն. մեղաւորը Թաւրիզի հարեմական կեանքի պայմաններն են և այդ պայմանները աւանդաբար ամրապնդող Թաւրիզի աղաները...

Հարկաւոր է, որ այդպիսի անփորձ, միամիտ, պարզ կանանցից կազմուած ընկերութիւնը եթէ լաւ ղեկավար չունի՝ անշուշտ «խոհարարական» ընկերութեան բաղդին կ'արժանանայ—դեռ չծնուած կը մեռնի։ Լսում ենք որ արդէն տարաձայնութիւններ կան Բերդաթաղի կանանց ընկերութեան անդամների մէջ։ ընկերութեան փողը շահեցնելու նկատմամբ, որքան ճիշտ է՝ չենք երաշխաւորում։

—

«Լոյս» ընկերութիւնը գոյութիւն ունի հոյ բողոքականների աշակերտների շրջանում. նրա մասին մենք նոյնքան գիտենք, որքան նրանց կեանքի մասին։ Ցաւելով պէտք է նկատել որ բողոքական միսիոնարութիւնը կարծես երդուեալ նպատակ է դրել իրագործել աւետարանի այն խօսքը թէ «դաժանեա՛ ձի սիրեսցեն»։ Թաւրիզում բողոքական համայնքը իր շատ սակաւաթիւ անդամներով անրում է մի առանձնացած կեանքով. նրանց ներքին աշխարհը մէկ զատուած, չինական աշխարհ է մեզ—Դավրէժի հայերիս համար. ոչ մի յարաբերութիւն, մտքերի ոչ մի փոխանակութիւն գոյութիւն չունի մեր և նրանց մէջ։ Բողոքական տաքթեայների այդ վարմունքը մենք զսպում ենք միանգամայն պախարակելի. բաժանել, առանձնացնել եղբայրը եղբօրից՝ որդին հօրից՝ բարեկամը բարեկամից և այլն... Ահա նրանց սկզբունքը տարիների ընթացքում։ Մրթէ այդ է քարոզում ս. աւետարանը, յանուն որի նրանք գործում են ամենուրէք... Սէր, միաբանութիւն, եղբայրասիրութիւն ահա ս. աւետարանի իսկական հոգին, վսեմ ճշմարտութիւնները... դրանց հետևեցէք և յաջողութիւնները ձեր կոգմը կը լինին։

Մեզ մնում է խօսել երկու թաղի ընթերցարանների մասին և մենք մեր ասելիքը Դավրէժի ընկերութիւնների մասին կը վերջացնենք։

Դավրէժի երկու թաղերումն էլ ընթերցարաններ կան. վերջերս Բերդաթաղում «Ընթերցասիրաց» ընկերութեան նախաձեռնութեամբ և նպաստով, բացուեցաւ մէկ հատ էլ ձրի ընթերցարան։

Բերդաթաղի ընթերցարանը համեմատաբար աւելի հարուստ է թէ գրքերով և թէ պարբերական հրատարակութիւններով, բայց նրա պայմանները— անդամավճարը այնքան թանկ է—տարեկան 15 դրամ—մատչելի չէ հասարակ դասին. հետևապէս ամբողջովին իր նպատակին չի կարող ծառայել։

Ընդհանուր այնհանգամանքի,որ Դավրէժի բուրժուան—փողի ոյժը—կեդրոնացած է Բերդաթաղում,դրա համար էլ նրանց տարեկան մուտքը բաւարար է։ Բացի տարեկան ծախքից, ընթերցարանը, եթէ չեմ սխալւում, դեռ մի 100 թուման էլ դրամագլուխ է յետաձգել. սակայն հետաքրքիր է գիտենալ թէ ինչու համար են այդ փողը շահեցնում. մրթէ ընթերցարանը այնքան ճոխ-բազմակողմանի գրքերով հարուստ է, որ էլ կարիք չի զգացում գրքերի թիւը աւելացնել։

Մաղալու է այդ ընթերցարանի վարչութեան անդամների ընտրութեան ժամանակ. էլ ինչ աղմուկներ, ինչ կուսակցութիւնների ?! բաժանուել և վերջը հաշտութիւն և հանգիստ մրափումն խոր անվրդով քնի մէջ...

(Կը շարունակուի)

Այդպէս են Ռուսաստանի բոլոր ծբխական կոչուող դպրոցները, այդպէս նաև Թիւրքաց-Հայաստանում եղած թաղային դպրոցները, որոնք ունին որոշ եկամուտներ և երբէք դժուարութիւն չեն կրում կրթութեան գործը առաջ տանելու մէջ։ Այդ կողմերում այլ ևս վերին աստիճանի դժուարութիւններ չեն ներկայանում երբ հոգաբարձուներ են ընտրվում. վերջիններս էլ այլ ևս չեն հրաժարվում անդադար, որպէս այդ անում են մեզնում, ուր ամեն տարի ստիպված են դռնից դուռ ընկնել, սրան աղաչել, նրան զզուեցնել, որպէս զի ուսուցչի ռոճիկը վճարեն և դպրոցական պիտոյքները հոգան։ Կրթական գործը այսպէս մուրալով, որպէս մեզնում են անում, ոչ առաջ տանել է կարելի և ոչ էլ նրանից մի արդիւնք յուսալ։ Այդպիսի սիստեմը զզուեցնում է, ձանձրացնում ժողովրդին, խրտնեցնում նրան դպրոցից, իսկ դպրոցը միշտ երերուն վիճակի մէջ թողնում. այս տարի կայ՝ ուսուցիչները լաւ են լինում և շատ. եկող տարի քիչ եկամուտ լինի՝ բերել են տալիս ապիկար ուսուցիչներ և կամ նրանց փողը վճարել չը կարողանալով, առաջացնում են մի կարգ անախորժութիւններ, անհամութիւններ. հետևանքը լինում է այն, որ ոչ ուսումն է կանոնաւոր տարվում և ոչ էլ դպրոցները կարողանում են ունենալ մի զգալի, գոհացուցիչ արդիւնք. երերուն առարկան ոչ մի կայուն ձև չէ կարող ունենալ. երերուն, մուրացկանութեամբ, անորոշ տնտեսական—այսօր շատ վաղը քիչ—եկամուտներով կառավարուող կրթական գործը եթէ մնասակար հետևանքներ չը տայ, ոչ մի ցանկալի արդիւնք չէ կարող արտադրել։ Հարկաւոր է ուրեմն ստեղծել, սահմանել որոշ եկամուտներ դպրոցների համար, ազատել նրանց մուրացկանութիւնից և ընտրուող հոգաբարձական մարմնին ազատ կացուցանել մուրալու զզուելի սիստեմից, դպրոցների տնտեսական խնդրի մասին տանջելու հարկից։ Հարկաւոր է վերջ տալ մեր դպրոցներին ոչ մի ակներեն արդիւնք չը տուող այդ գծուծ սիստեմին, և կանգնեցնել նրանց՝ տնտեսական հաստատ հիմունքների վրայ։

Այդպիսի հիմունքներ կարող ենք ստեղծել, գոյացնել։ Եկեղեցին և նրա կալուածներն ու եկամուտները, աշակերտական թաշակների սիստեմը, մի որոշ ֆոնդի տոկոսները՝ մինչև այժմ աչքի խփող միջոցներից են։ Քննենք քիչ և տեսնենք թէ որքան արդիւնաւէտ կարող էին լինել նրանք։

Այդ մենք կանենք մի առ մի, մի շարք յօդուածներում, անհրաժեշտ համարելով հրաւիրել այս խնդիրների վրայ բոլոր թեմական առաջնորդների, գործակալների, դպրոցական հոգաբարձուների, և այլն լուրջ և խորին ուշադրութիւնը։ Կրկնում ենք, կրթական գործը մի այնպիսի ծանրակշիռ գործ է որ արժէր նրան տնտեսական հաստատ հիմունքների վրայ դնել, մուրացկանութիւնից ազատել և միջոցներ տալ որ նրանից մեր ապագայ սերունդը իրականապէս օգուտ։

Մենք ուրախութեամբ կը տպագրենք այդ մասին մեզ ուղղուած կարծիքները և առաջարկուած ծրագիրներ նաև երբ մեր ասելիքը վերջացնենք։

*Վ. Փ.*

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍԱԼՄԱՍՏԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻ ՎԱՆԴԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Գաւառիս թեմական տեսուչը, կարող ենք ասել, այս անգամ ինքն իրան գերազանցեց։

Իմանալով որ Փայաջուկի նախկին ուսուցիչը Մ. Ռուբէն, որ ինք պաշտօնից հեռացրած էր՝ իրեն հակառակ կուսակցութեան պատկանելուն համար, չէ կամեցել իր մի թղթի տակ ստորագրել, թեմ. տեսուչը երէկ կիրակի, կէսօրին, իր վարձկան վեց անձերի հետ Փայաջուկ հասնում է շնչասպառ և իր կրքի ժամանակ իրան թոյլ է տալիս հետեւեալ ամենախայտառակ ձևով վրէժ հանել նրանից։ Կանչել և իր առջև բերել է տալիս այդ ըմբոստ ուսուցչին և առանց ուշադրութիւն դարձնելու ոչ նրա պատկառելի հասակին, ոչ նրա բազմամեայ արդիւնաւոր ուսուցչութեան, օր ցերեկով, գիւղի հրապարակում նրան ստիպում է չորս ոտքի վրայ կանգնել և այդ դիրքի մէջ մտրակի հարուածներ ընդունել վարձկանների ձեռքից։ Ներկայ եղողներից մի քանիսը համարձակվում են միջնորդութիւններ անել, բայց ի զուր, իսկ տեսուչը վայրենութիւնը այնտեղ է հասցնում որ պահանջում է նախկին ուսուցչից, ամանչում ենք ասել, էշի ձայն հանել, որ ազատուի աւելի անարգանք կրելուց։ Այդ միջոցին բազմութիւնը հետզհետէ խռնուելով միջամտում և ուսուցչին մի կերպ հեռացնում և ազատում են։ Մենք մնում ենք շուարած, տեսուչն ինքն է արդեօք ոճրագործ այստեղ, թէ անաարբեր կեցած հասարակութիւնը որ տեղնիտեղ չէ ուզեցել այդ տեսակ մի վայրենիից ազատուել և իր հլութեամբ ինքն է ստեղծում և բազմացնում այդ պարազիտների թիւը։

Տեսուչը նոյն սվիտայով մօտակայ Կալասար գիւղն էլ է գնացել և կամեցել այնտեղի ուսուցիչ պ. Նիկոլին էլ նոյն խաղ խաղալ, սակայն նա մի կերպ զգուշութիւն է ձեռք առել և խուսափել է վարձկան ֆնիչերների հոտառութիւնից։

Մենք սպասում էինք որ երէկվայ դէպքը մեր վաճառականների ականջը հասնելով նրանց մէջ պատուի զգացումը կը զարթնէր և նրանք մի ազգու միջոց ձեռք կառնէին միանգամից ազատուելու մի վանդալի ձեռքից, սակայն նրանց նոյն իսկ ամենից զարգացած համարուածներ, որոնք ժողովի մէջ խօսելու կարգը ուրիշներին չեն թողնիլ՝ այս պարագային գայթակղելի անզգայութիւն և պատուի զգացման բացակայութիւն ցոյց տուին, գուցէ վախենալով որ՝ իրանց գլխին էլ ուսուցիչների օրինը կը բերէ։

Դեռ ուր պիտի տանի մեզ հոգևոր իշխանութեան անտարբերութիւնը։

Լսում ենք որ ուսուցիչների մի մեծ մասը արդէն բողոքել է թեմ. առաջնորդին և մատադրել է հրաժարական տալ և մինչև որ բաւարար հատուցում չը տրուի իրանց նախկին պաշտօնակցին՝ գործի չը վերսկսել։ Յիշենք նաև որ թեմ. տեսուչը որ ինքն իրան արդարացնելու համար շարունակ դանդատներ է որ յայտնում է թէ ուսուցիչ չը կայ, մի և նոյն կուսակցական կրքով պաշտօնանկ արեց մի ուրիշ, գաւառիս մէջ շատ յայտնի և համակրելի ուսուցչի՝ Յարութիւն Տէր-Առաքելեանց, որ Կովկասի մէջ բարձր ուսում ստանալուց յետոյ, անձնուիրաբար յանձն էր առել Սալմաստի պէս աննշան մի տեղում պաշտօնավարել։ Տեսչի քմածին կարգադրութիւնները իրաւացի դժգոհութիւններ են առաջացրել աշակերտների մէջ. նոր տարեշրջանի սկզբին, Հավիծուանի և Փայաջուկի բարձր դասարանների ուսանողները չը պիտի շարունակեն իրենց ընթացք, եթէ պաշտօնանկ եղած լիշեալ ուսուցիչները պաշտօնի կանչուելու չը լինեն։

Ուսուցիչ պ. Յարութիւն Տէր-Առաքելեանց այժմ Կովկաս է գնացել. հաստատ աղբիւրից լսում ենք որ վերադառնալու է շուտով, իր հետ բերելով մի քանի թարմ ոյժեր և Կալասարի ուսուցիչ պ. Նիկոլի և շնորհազուրկ եղած ուրիշ ուսուցիչների հետ մի անկախ ուսուցչական խումբ են կազմելու, վաղուց մտածուած կենդ. վարժարանն իրանց ոյժերով իրականացնելու համար, երբ մեր աղաներ հա խօսում են, հա՝ ծրագրում, բայց փողին կարգը եկած ժամանակ, իսկոյն դէն են շպրտում ծրագիրները։

Այդ նոր խումբ հարկաւոր միջոցներ ձեռք է առնելու, հոգ. իշխանութեան և նրա կարգած տեսչի կամայականութիւններից ազատ պահելու այդ հիմնարկութիւնը։

Մխիթարական մի երևոյթ էլ եթէ կայ այս է որ «Շաւիղի» ֆելիետոնները, Սալմաստի տեղ. բարբառով գրուած, մեծ ագահութեամբ են կարդացվում ռամիկ կոչուած դասակարգի մէջ. նրանք որ չօտկից զատ ուրիշ բան չէին ճանաչում և անասնական—բուսական կեանք էին անցնում, այժմ սկսել են «Շաւիղի» արծարծած հասարակական խնդիրների մասին խօսել, դատողութիւններ անել և «Շաւիղի» ուղղութեանը համակրել. «Շաւիղը» այժմ ունի իրա որոշ կուսակցութիւնը այստեղ. և բազկացած բացառապէս բոլոր այն անձերից որոնք «Շաւղի» շնորհիւ մարդկային ինքնաճանաչութեան են հասել։

Այստեղ էլ ունէք ձեր հակառակորդներ. մենք լոյս ունենք որ դուք արհամարհանք միայն ունէք այն մի քանի արարածների մասին, որոնց դիւր չի գագալիս ձեր արդարացի հարուածները։

***

## ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ

—

21 ապր. 95

Այսու յայտնում ենք մեր գոհունակութիւնը—շնորհակալութիւնը պ. Մ. Աւետիսեանին իր արած քաջագործութիւնների համար, կրթութեան գործում այնչափ արթուն ու հոգատար լինելու համար։ Իսկապէս զովելի է իր արածը. ուսումնական տարին արդէն վերջանալու վրայ է, դեռ ևս նար է արմնանում։ Ահա տարին ամիսն է, մեզ մօտ է ուղարկում նախչուանցիներին համար ուսուցչութեան պաշտօնակ. Ստեփան Տէր-Ստեփանեանին։ Չգիտենք ինչ անուն տանք պ. Աւետիսեանի գիւղական կրթութեան հետ ունեցած այդ տգեղ վարմունքի համար։ Ինչ է նշանակում ամբողջ ամեռը անցկացնել,—որ գիւղացիների համար ամենայարմար ուսման ժամանակն էր—իսկ գարնան ժամանակ մտածել, հոգ տանել նրանց կրթութեան մասին, նրանց ուսումնարանի մասին. չէ որ գիւղացիները գարնանը սկսում են գուրս գալ գաշտը և իրանց հացի մասին մտածել և հետևաբար երեխաներն էլ չեն կարող այդ ժամանակ ուսումնարան յաճախել, բոլորը կը ցրուեն. կարծեմ հէնց այդ է եղել և տեսչի նպատակը։

Իսկ ինչ որ զարմանալին է այն է՝ որ այդ գիւղումը — Նախչևանթէփէումը գործը չաջողելուց յետոյ, քաղաքիս ուսուցիչը Պ. Միհրանը առաջարկեց նրան իր պաշտօնը, և որովհետև մինչև այժմ կանոնաւոր հոգաբարձուներ ընտրուած չը կան, մի քանի վաճառականներ ժողովեցան իրը թէ հոգաբարձուներ ընտրելու, որպէս զի կարելի լինի գործը այսուհետև կանոնաւորապէս շարունակել. բայց ինչ. բանից դուրս եկաւ որ այդ տէր—թոդիկեան ուսման ծանոթ չեղողները նոյն իսկ, ուսուցչին փոր ձելու են կել միայն, ոչ թէ մի գործ կատարելու. որովհետև երբ ժողովի հետևանքը առաջարկում են և ուսուցիչը արձանագրում է, ձեռքից ձեռք են պտտեցնում այդ գրութիւնը որպէս զի սխալներ գտնեն և միւս օրը առարկում են թէ ոչ ոք չէ ուզում հոգաբարձու լինել և թէ ուսուցիչը հայերէն չը գիտէ) մեզ պէտք չէ։ Մինթէ այդ աստիճանի անքաղաքավարութեամբ, անճոռնիութեամբ կարելի է վարուել։ Ինչու էր թեմական տեսուչը ուղարկում ուրեմն նրան. միայն անպատուելու, խայտառակելու համար. իսկ եթէ ուսուցչական ինստիտուտը աւարտողներից մէկն է, ինչպէս վկայում է տեսուչը, ուրեմն այդ ինչ օրինազուրկութիւն է։ *)

Պ. Միհրանն էլ ուսուցչութիւնից զրկուած, այժմ մտադիր է որբանոց բանալու, որի փողը որտեղից պէտք է գտնէ, զառանցանք է թէ իրականութեան կարգ պիտի անցնի—չը գիտենք առ այժմ. մեզ այն է զարմացնում թէ ինչպէս դիրեքտոր լինել է ձգտում, միշդեռ մի հասարակ ուսուցչութեան պաշտօնը չի կարողացաւ տանել։

Այս օրերս Թարգաւառում ցեղային մի քանի շփոթութիւններ պատահեցան յառաջ եկած մի չնչին պատճառից։ Բոլուչանցոց (բոլորն ասորի) հօտը արածե-

*) Այդ որպիսի անամօթ վարմունք է հոգաբարձուների կողմից։ Ս. Խ.

լիս մի ոչխար մտնում է շիրանցոց (ասորի) անդը, որին տեսնելով մի շիրանցի, յարձակվում է հովւի վրայ, մի լաւ ծեծում է և ոչխարին էլ սպանում։ Հովիւն իսկոյն լուր է հասցնում գիւղը, գիւղացիք գինուած դուրս են գալիս կուի և սպանում են Շիրանի մէլիքին և մի ուրիշին։ Դրանք էլ տես պահած Զատկին միանալով Հարքի և Բակչադէ քրդերի հետ յարձակվում են Բալուլանի վրայ և սպանում մի քանիսին. այնպէս որ յարաբերութիւնը այժմ սաստիկ լարուած է. ստիպուեցան զօրք խնդրելու։

Տէր Զարեգինին՝ իր մի քանի հակամարդկային վարմունքի պատճառով որոնց այլ ևս չենք ուզում թուել—Կէրդապատից ու Ռայուալից դուրս են քշել։

Ե.

## ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

13 ապր. 95

Ինչպէս որ Փարրուխը խոստացել էր մեր Թաւրիզու ջօջ առաջնորդին մի գիւժին սիրացու, այն էլ ոգէտ, ահա կատարվում է. մէկը արդէն ձեռնադրուեց, 3-ն էլ մի շաբթից յետոյ պէտք է ձեռնադրուին. կը մնայ 8-ը՝ նրանք էլ, Աստուած ողորմած է. այսպէս որ ես եմ տեսնում մեր «ջօջ» առաջնորդին՝ շուտով կը լրացնէ։

Հիմա մի քիչ տեղեկութիւն կը տամ որանց առաջինի մասին այն է Մ. Ուրմելեանցի. երեք օր սրանից առաջ երկու աշակերտներ հետաքրքրուելով, հարցնում ենքահանայուից, թէ ինչը դրդեց նրանքահանայական պաշտօնն ստանձնելու, արդեօք ինչ նպատակ ունի։ Քահանայացուն պատասխանում է. «Ուզում էք ճիշտն ասեմ, մէջքս չի կռանում ուսումնարանը սրբելու, աչքումս լոյս չը կայ, ջէրումս փող չը կայ, ես էլ 60 տարեկան, լաւն նա է որ գնամ տէրտէր դառնամ, բացի սրանից ուրիշ արհեստ չեմ կարող ճարել։ Ուսանողներից մէկը հարցնում է թէ «դուք պէտք է դաս տաք երեխաներին», նա պատասխանում է թէ «այո, ես պէտք է դաս տամ, և ոչ այնպէս ինչպէս ձեզ են դաս տուել. ես Մարիամ լեզու բան չեմ իմանալ, ես եօթն իմաստնոց առակը պիտի դաս տամ, որովհետև այնտեղ սուրբերի համար բան կայ գրած, կարելի է ժամանակով նրանց էլ տէրտէր շինեմ»։ Աշակերտներից մէկը Ա-ը, հեգնական ժպիտով հարցնում է՝ երկրաչափութիւն և ֆիզիկա էլ պիտի դաս տաք, չէ.—«այո դրանք բոլորը պիտի սովորեցնեմ». հարցնում են—ինչ դասագրքով, պատասխանում է—Էփրեմ-Փէրտու մէջ ամենը կայ։ Քահանայուցուն այնուհետև մի հոգոց է հանում և ասում, դրանք հեշտ են իսկ Վարդանի նազլը ինչպէս դաս տամ. էհ ինչ կայ հալբաթ մէկը ինձ կը պատմի, երբ սովորեմ ես էլ աշակերտներիս կը սովորեցնեմ։

Ահա, մեր սրբազան ջօջ առաջնորդը այսպիսիներին է յանձնում անմեղ մանկանց կրթութիւնը, այսպիսիներին է յանձնում տառապեալ ժողովրդի ղէկը, յետոյ իր քարոզներով ուզում է արդարանալ թէ՝ սրանից լաւը չը կայ ինչ անեմ։

Բ.

## ՆԱՄԱԿ ԽՈՅԻՑ

—

30 մարտ 95

Հետաքրքիր չէ թէ Սալմասի հայն առաջ. փոխանորդը ինչեր արաւ մեզնում։ Ապաշխարանդամ երբ նորին պրժ. եկաւ Խոյ, այնպեղից դնաց Սէյդավար գիւղը. դէս մէկ ժամայ ճանապարհ մնացած՝ մարդ է ուղարկում գիւղը թէ «թող գան քամ խառաջ»։ Գիւղացիք չեն իմանում թէ որտեղ պէտք է հանդիպեն նրան, ոչ որ ընդ առաջ չէ դուրս գալիս։ Փոխանորդը այս բանի վերայ սաստիկ կատաղում է և գիւղը հասնելուն պէս իր ծառաներին ուղարկում է գիւղի փողոցները և հրամայում թէ որտեղ խոտի դէզ կը գտնէք բերէք լցրէք ձիերի ասաջը. ծառաներն էլ հէնց այդպէս բանի էին սպասում և էլ խոտ չի մնում բերում լցնում են ձիերի առաջը .ապա կանչում է գիւղի երեցփոխին և նրանից գարի պահանջում. երեցփոխը ասում է որ պատրաստի չկայ. նա մի քանի անդամ սպառնում է թէ կը թակեմ, ոտքերդ կը կապեմ և կ'ուղարկեմ.... սակայն երևի ամբոխի կատաղութիւնից երկիւղ կրելով՝ իր պահանջները սահմանափակում է,ապա մեղադրում է տեղի քահանային ինչ որ մի յանցանքի մէջ, (որ իսկապէս արժանի էր) սակայն կրկին ժողովրդի սպառնալիքից վախենում է։

Մօտ օրերս կրկին լսեցինք որ եկաւ Սէյդավար։ Այդ գիւղից մի գիւղացի ոմն մահմեդականութիւն է ընդունում. Սալմասի փոխանորդը իսկոյն և եթ ձի է նստում դալիս է ասելով «կ'դնամ կ'փախցնեմ, այսպէս կանեմ, այնպէս կանեմ».... հասնելով գիւղը գիւղացիներին կանչում է որ իր հետ գնան դատաւորիմօտ,դատաւորը մերժումէ որ ժամանակ չունի. գիւղացիները երկիւղ կրելով չեն գնում։ Վարդապետը մնում է շարած և ասում է. «ես եկայ ձեզ համար, եթէ ոչ չէի գալ, քանի որ ա. անդամ գալուն այստեղ 16 թուման ծախս արեցի». միթէ դա էլ հիւրասէր պարոնների շնորհակալութիւնն է որ յայտնում է. հարցնում ենք ինչու, որտեղ և ինչ բանի համար այդքան ծախս դրեցիք, բարեհաճեցէք մեր հասարակութեանը յայտնելու որպէսզի թեթեւացնենք ձեր մեծ ծախսերը։ Ապա աւելացնում է թէ եթէ շուտ չվերադառնայ Սալմաստ՝ 300 թուման կ'կորցնի։ Գիւղացիներից մէկը ասում է «լաւ է չմնաք և շուտ գնաք որպէսզի 300 թումանը ձեռքից դուրս չանցնի.»և իսկապէս երկրորդօրը մէկ էլ լսեցինք որ գնացել է. այդ բանը ժողովրդեան խոսակցութեան նիւթ է դառել,միմիանց են պատմում, անվերջ ծիծաղում թէ ինչու եկաւ ինչու գնաց, մանաւանդ որ այնքան գործեր կան այստեղ կատարելու։ Եկեղեցիները բոլորովին անխնամ, երեցփոխներ չունեն. եկեղեցական կալուածներից մի մասը հարևան պարսիկներն են տիրացել. մի մասը առանց ուշադրութեան ամայի է մնացել, այն ինչ կարող է բաւականաչափ արդիւնք տալ։ Եկեղեցիներում եկեմբաց հաշիւներ չկան, ծխականների ցուցակ չկայ, յայտնի չէ թէ որ եկեղեցին ինչ անօթներ ունի։ Տեղւոյս ուսումնարանը բոլորովին անյարմար մութ և խոնաւ շինութեան մէջ է ս. Ած. եկեղեցու գաւթում. ննջեցեալները թաղում են եկեղեցու և ուսումնարանի հէնց դռների առաջ, չնայած որ դրա համար առանձին հին ժամանակներից մնացած գերեզմանատուն կայ Ս. Սարգիս եկեղեցու մօտ։ Ահա այսպէս եկեղեցական գործերը երեսի վերայ ընկած են չ'գիտենք փոխանորդը էլ որ օրայ համար է։ Զարմանում ենք, եթէ իրանք չեն կարողանում մէկ պաշտօն կատարել ինչու են յանձն առնում այդ ծանր պաշտօնը. ինչու չեն հեռանում, դուցէ դանուի մէկ ուրիշը որ իր ընդունակութեամբ և արժանաւորութեամբ կարողանայ մէկ ծառայութիւն մատուցանել և լոյս սփռել պարսկա-հայերի այս մութ անկիւններում։

Ցօնս

Սէյտավար գիւղ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Դավրէժ 27 ապր. 95

«Շաւիղի» 13-րդ համարի ներքին լուրերի մէջ Խոյից հաղորդած յօդուածը, որ վերաբերում էր այնտեղի նոր բացուելիք մանկական դրադարանին, Վարչութիւնս կարդալով, որոշեց նպաստել այդ ձեռնարկութեան։ Ուստի և ներկայիս յայտնելով «Շաւիղի» միջոցով իր որոշումը, սպասում է այդ մասին ընդարձակ տեղեկութիւններ ստանալու այդ գործը ձեռնարկող պարոններից.

Ի դիմաց վարչութեան՝

Նախագահ Յ. Յովհաննիսեան

Քարտուղար Ա. Զահրադեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ընթերցողները լիշում են որ սրանից մի քանի ամիսներ առաջ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում մեծ խռովութիւններ տեղի ունեցան, որոնց արդիւնքը այն եղաւ որ արտաքսեցին մօտ 70 աշակերտներ։ Շատ հետաքրքիր պատմութիւն է այդ. մօտակայ համարներից մէկում կը սկսենք տպագրել մի քանի դոկումէնտներ, որոնք կապացուցանեն թէ որպիսի խայտառակութիւնների ասպարէզ է դարձել հայոց մեծ սրբավայրը՝ Էջմիածինը և միակ մեծ դպրոցը, ճեմարանը։

—

Հայերի մասին անգլիական շատ թերթեր են սկսել երկար ուսումնասիրութիւններ տալ, ի թիւս որոց և մի ամսագիր «Fornightly Review» որ իր փետրվար ամսի համարում ծիծաղելի լրջութեամբ հայկական հարցի լուծումը գտնում է միայն... քաղաքակրթութեան ընթացքին հետևելու մէջ և խորհուրդ չէ տալիս միւս հայերին խառնուել հայկական այժմեան գործերի մէջ, «ուր նրանց համար ոչ մի լաւ բան չի գոյանալ»... ինչպէս երբեմն մարդիկ կարողանում են լրջօրէն լիմարութիւններ գրել... «Contemporary Review»-ում սակայն Ե. Ս. Ստէվենսօնը ունի մի կրակոտ յօդուած հայերի մասին, ուր նա շատ հետաքրքիր բաներ է ասում և որից դժբաղտաբար մենք կտորներ տալ չենք կարող, մեզնից անկախ պատճառներով։

—

«Մշակը» գրում է. «Հետևեալ տխուր փաստն են հաղորդում Թիւրքաց սահմանագլխից «Մարտի 30-ին, չը նայելով սաստիկ ցրտերին Թիւրքաց-Հայաստան անցաւ անգլիական մի յայտնի լրագրի թղթակիցը։ Նա անցաւ դէպի Ալաշկերտ։ Ինչպէս երևում է ստացված տեղեկութիւններից, թղթակիցը Իւչքիլիսէի հայոց վանքի դրանը 2 ժամ սպասել է, բայց, վերջ ի վերջոյ, խաբել են և ներս չեն ընդունել, այն էլ դիշեր ժամանակ։ Հաւատացնողներ կան, որ եպիսկոպոսն այնտեղ չէ եղել, թէև ուրիշների ասելով այնտեղ է եղել։ Թղթակիցը ստիպված է եղել դիմել քիւրդերի հիւրասիրութեանը, որոնք և սիրով ընդունել են «կօնսուլի մարդուն», ինչպէս որ կարծել են նրա մասին։ Քիւրդերը ընդունում են օտարերկրացի քրիստոնեայ մարդուն, իսկ հայոց վանքը՝ ոչ։ Իւչքիլիսան էլ մի երկրորդ ս. Կարապետ վանք է ուզում դառնալ։»

—

Իտալական (Թուրինի) «Papagallo» զաւեշտաթերթը իր մարտի մի համարի մէջ տպել է մի պատկեր, որի մէջ ներկայացուած են բոլոր տէրութիւնները հանգստութեամբ նստած տաք բեստորանում, զարեջրի շշերի առջև և կարդում են հայկական ազէտների մասին, իսկ մի հայ քահանայ (որ ներկայացնում է հայը) թշուառ ու յուսախափ. դէմքով նայում է նրանց և ասում. «ամենքը կարդալով միայն բաւականանում են... ինչ անշահ մխիթարանք ինձ համար»...

—

«Մշակ» լրագիրը հաղորդում է մի այսպիսի ցաւալի լուր. «Լօնդօնի Հայոց կօլօնիան, որ բաղկացած է ոչ աւելի քան 200 հայերից, բաժանուած է վեց—եօթ խմբերի, որոնք միմիանց վերաբերվում են վերին աստիճանի թշնամաբար և նոյն իսկ ատելութեամբ»։ Որքան ափսոս այդ մի բուռ հայերին, որոնք իրենց զգաւեշի անձնական շահերին մի այսպէս ժամանակ իսկ չեն կարող դատարտալ, ընդհանուր գործին չը վնասելու համար։

—

Արդաբիլից մեզ գրում են, որ «Շաւիղ» № 11-ի բանասիրականում, «Արտաբիլ» յօդուածի մէջ տպուած տեղեկութիւնները Աստարայի կոմիսիօներների վերաբերութեամբ—բոլորովին սուտ է, որ նրանք ընդհակառակն միաբան են և այլն և այլն և որ պ. Բ. Տէր-Սարգսեանի հաղորդածները բոլորն էլ ստութիւններ են։ Այդ մասին եկած թղթակցութիւնը չենք կարող տալել և ոչ էլ մտադիր ենք 2—3 կոմիսիօներների համար տողեր նուիրել. եթէ միաբան են—աւելի լաւ, եթէ ոչ—աւելի վատ իրենց համար. բանակռուի նիւթ չէ այդ։

—

Շահրուդից հաղորդում են որ ոտով ճանապարհորդ Ֆոն-Ռէնդարդէնը ապրիլ 23-ին հասել է այնտեղ և լաւ հիւրասիրուել եղբարք Թումանեանց դրասենեակում։

—

Կարդալով «Շաւիղի» անցեալ համարում թերթիս հրատարակչի ազդը 771 դրան փողի մասին, մի քանի պարոններ դիմել են խմբագրութեան և պահանջել որ իրենց ետ տրուի այդ գումարը այն հիման վրայ, որ այդ գումարը հանգա-

նակողները իրենք են։ Մի ո և է հանգանակած գումար ետ է տրվում այն ժամանակ, երբ տուողների մեծամասնութիւնն է պահանջում, այլապէս նա կը մնայ խմբագրութեան մէջ, մինչև որ հարկ եղած հասցէները ստացուին և փողը իր նպատակին ուղարկուի, երբ այդ անկարելի լինի անել, այն ժամանակ ինքը խմբագրութիւնը կազդարարէ և ամեն մարդ կարող կը լինի գալ և իր տուած փողը ետ ստանալ մինչև վերջին կոպէկը։

—

Հայկազեան դպրոցի ուսուցչական խորհուրդը արտաքսել է դպրոցից մի աշակերտի, նրա անուղղայ փչացած բարքի համար. այս առիթով չենք կարող ցաւ չը յայտնել այն վարմունքի համար որ ունին մի քանի ծնողներ գրգռելով իրենց որդիներին՝ վարժապետների դէմ։ Այդպիսի վարմունքը ոչ միայն վնասում է կրթական գործին, այլ նոյն իսկ աշակերտին։ Վերոյիշեալ վռնտուած աշակերտը պարզ ապացոյց է դրան։

—

Ինչպէս երևում է Կ. Պոլսի «Հայրենիք» թերթն էլ շրջապատուած է մատնիչներով, որպէս «Շաւիղը» և այն էլ Սանասարեան դպրոցի միջից։ Ասենք ոչ ոք դեռ չէ մոռացել 1892 թուի «Մշակի» մէջ տպուած Ապրօի նամակները, որոնցում Սանասարեան դպրոցը «կարմիր ֆէսերով» լիքնէ ներկայացրած։ «Հայրենիքը» փաստը յայտնում է այսպիսի խօսքերով. «Թղթակցութիւններ նորէն կը ստանանք Սանասարեան վարժարանի նկատմամբ, բայց այս անգամ քաջութիւն չենք զգար որոշ դիրք մը բռնել հանդէպ այն կարգ մը անձերուն, որոնք կը կատարին աւելի կամ նուազ ակներև դեր մը» Յետոյ էլ աւելացնում է. «այդ դպրոցը եղած է դաշտ մը, որուն վրայ աշխատողները սկսած են մէկ մէկու դէմ կասկածանքով նայել»։ Պարզ է. այդ դպրոցի դէմ էլ խօսել չէ կարող «Հայրենիքը» վախենալով նրա միջի «կարմիր ֆէսերից»։ Բայց թէ հրանում էլ փաստ Աստուծոյ ապատ չենք այդպիսի շնորհալիներից. «Շաւիղը» մի անգամ չէ որ ենթարկուել է նրանց ազնուութեանը։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զվէյցարացի յայտնի բնագէտ Բաուլ Պիկտէն որ շատ ժամանակից ի վեր զբաղվում է սաստիկ ցրտութիւնից առաջացած զանազան երևոյթներով և որ կարողանում է գոյացնել մինչև 150 աստիճան ցրտութիւն հետևեալ հետաքրքիր դիտողութիւններն է յայտնում։

«Տասը տարիէ որ ես ստամոքսային այնպիսի հիւանդ էի, որ ամէն կերակուրից վախենում էի և վաղուցէր որ մոռացել էի թէ ինչ բան է ախորժակ ասած բանը։ Իմ գտած սառեցնող միջոցներով—110 աստիճան ցրտութիւն տալով մի սենեակի ես մտայ նրա մէջ տեսնելու համար թէ ինչ կը լինէր, ի հարկէ նախապէս լաւ փաթաթուելով մի մուշակով։ Երևակայեցէք որ մի քանի րոպէից յետոյ այնպէս քաղց սկսեցի զգալ որ երբ կամերից դուրս եկայ, ադահութեամբ ուտել սկսեցի. այն փորձը առիթ տուաւ ինձ բժշկական փորձեր անելու և 8 օր շարունակ օրական մի անգամ մտնելով այդ սառեցրած սենեակի մէջ, 8—10 րոպէ այնտեղ անցկացնելուց յետոյ, բոլորովին ազատուել եմ այժմ ստամոքսային հիւանդութիւնից։ Այժմ ուղղակի ջայլամային ստամոքս ունիմ և քար անգամ կարող եմ մարսել»։ Այսպէս ուրեմն, նշանաւոր բնագէտի փորձը ցոյց է տալիս որ ցուրտը շուտով կը դառնայ ստամոքսային ամենազօրեղ բժշկող միջոցը։ Բաուլ Պիկտէն յայտնի է որպէս է ջրածնի գինտ վիճակի վերածողը հայլն, սակայն նրա այս գիւտը կը լինի նրա փառքը։

—Ռուսական հեռ. գործակալութիւնը ապրիլ 15 թուով հեռագրում է հետևեալը։ Հինգշաբթի մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչի պալատում գեներալ Կուրապատկինը կարդաց «Այժմեան Պարսկաստանի տեսութիւնը» խորագրով իւր մի զեկուցումը։ Գեներալը մասնաւորապէս այն հանգամանքի վրայ, թէ անհրաժեշտ է շուտափոյթ կերպով շինել Թիֆլիսի-Երևանի երկաթուղին, որ արդէն թոյլ է տրուած, շարունակելով այդ երկաթուղին մինչև Ջուլֆա և Թաւրիզ. ասաց նմանապէս, թէ անհրաժեշտ է շուտափոյթ կերպով կառքի ճանապարհ շինել Աստարայից Արդաբիլի վրայով մինչև Թաւրիզ և բարելաւել կառքի ճանապարհը Ասխաբադի և Մեշհեդի միջև։

—Հեռագիրները պաշտօնապէս հաղորդում են, որ Մէկքայում խոլերա է երևացել։ Զգուշութիւն պարսկաստանցիներին. Մէկքան շատ հեռու չէ և նրա հետ Պարսկաստանը քիչ յարաբերութիւն չ'ունի։

—Պարիզից «Новости» թերթին հեռագրում է հետևեալը.—«Petit Journal» լրագրի ասելով ռուսիկանութիւնը երևան է հանել հանրապետութեան նախագահի կեանքի դէմ կազմած մի դաւադրութիւն։ Անգլիացի մի անիշխանական մտադրուած է եղել սպանել նախագահ Փորին նրա՝ հաւ հասած ժամանակ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս. մայիս 10 (Ն. տ.) Ֆրանսական, Անգլիական և Ռուսական Կ. Պոլսի դեսպանները Բ. Դռան ներկայացնելու համար պատրաստել են մի ծրագիր՝ Հայաստանում մտցնելիք բարեփոխութիւնների համար։

Կ. Պոլիս. մայիս 13 Անգլիոյ, Ֆրանսայի և ռուսական դեսպանները ներկայացրին Սուլթանին, իրենց կազմած Հայաստանում գործադրելիք բարեփոխութիւնների ծրագիրը։

Կ. Պոլիս մայիս. 15 Հետևեալ գլխաւոր կէտերը պարունակուած են այն լիշատակագրի մէջ որ ներկայացուած է Սուլթանին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսիայի դեսպանների ձեռքով, Հայաստանի բարենորոգումների մասին. կառավարութիւնները իրաւունք պէտք է ունենան վալիների ընտրութեան մասնակցելու. (նոցա հաւանութեամբ պէտք է ընտրուին). բարձրաստիճան պաշտօնեաների մի 3-րդը պէտք է նշանակի քրիստոնեաներից. բարձրագոյն Դուռը պէտք է նշանակէ մի բարձր կոմիսէր ոչ եչ եւրոպացի, որ հսկէ բարենորոգումների գործադրութեան վերայ. մի յանձնաժողով բաղկացած մուսուլմաններից քրիստոնեաներից, պէտք է հսկէ Հայկական նահանգների մէջ դատարաններ հաստատելու վերայ. բանտերի վերայ կանոնաւոր հսկողութիւն պէտք է լինի. քուրդերի ձեռքից զէնքերը պէտք է առնուին։

Լոնդոն. մայիս 15. Քննիչ յանձնաժողովը Սասունում գտել է հայ սպանուածների դիակներով լիքը փոսեր։

—

Զիֆու. մայիս 8 Խաղաղութեան դաշինքները վաւերացրած՝ փոխանակուել են Չինաստանի և Ժապոնի մէջ։

Շանխայ Մայիս 9. Զիֆուից երէկ հասած մի մասնաւոր հեռագիր հաղորդում է որ խաղաղութեան դաշինքների փոխանակութիւնը չը կատարուեց և ընդմիջուեց վերջին վարկեանում շնորհիւ նրան որ ռուսական Զիֆուի մօտ կանգնած նաւատորմիղը ափից հեռացաւ պատերազմական գործողութիւն սկսելու համար։

Փարիզ. 10 մայիս. Այն յուզումը որ Դը Լոնքլը բարձրացրել է անգլիացոց Եգիպտոսը պահելու առթիւ՝ շարունակվում է. ֆրանսական մամուլը պահանջում է Անգլիայից՝ թողնել Եգիպտոսը և տալ երկրին ինքնավարութիւն եւրոպական պետութիւնների համաձայնութեամբ։

Պետերբուրգ. Մայիս 10. Այստեղ խօսվում է որ ռուսական, ֆրանսական և գերմանական Խաղաղական նաւատորմիղները թուով չեն պակասեցնելու մինչև որ Չինաստանի և Ժապոնի մէջ եղող բոլոր հարցերը լուծում ստանան։

Լոնդոն. 11 մայիս. Մի նոր լուրջ հարցէ բարձրացել Անգլիայի և Ֆրանսիայի մէջ՝ Նիգերի հողերի մասին։ Այստեղ լուր է հասնում Ստորին Նիգերից որ ֆրանսական էկսպեդիցիան կապիտան Լրկուրի հրամանատարութեան ներքոյ է եղել սկսած 1885-ից ի վեր։ Ուրիշ լուրեր միջին Նիգերից յայտնում են որ մի երկրորդ էկսպեդիցիա պարոն Բալոի—Դահոմէի ֆրանսական կառավարչի—հրամանատարութեան ներքոյ, անցնում են Նիգերի ընկերութեան հողերի միջով դէպի Սքոտօ և աշխատում է դաշինքներ կապել բնիկ ցեղապետների հետ և 1890-ի ֆրանկո-անգլիական դաշինքները այդ մասին՝ խորտակել։

Բերլին. Մայիս 12. Երկար և բուռն վիճաբանութիւնից յետոյ Ռեյխստագը մերժեց կառավարութեան կողմից առաջարկուած հակայեղափոխական օրէնքի ծրագիրը, որ արուած էր սոցիալիստների դէմ։

Պետերբուրգ. մայիս 13. Բարեկամական բանակցութիւններ են տեղի ունենում Ժապոնի և Ռուսիոյ մէջ խաղաղութեան դաշինքներում եղող մի քանի վիճաբանելի կէտերի վերաբերմամբ։

Տօկիօ. մայիս 13. Համաձայնութիւն կազմուեց Չինացւոց և Ժապոնի մէջ, որ վերջինս թողնի Լիաթունկի թերակղզին Չինաստանին։ Այդ դաշինքը յայտնում է որ Ժապոնիան համաձայնուել է թողնել Չինական ցամաքահողը, հետևելով եւրոպական կառավարութիւնների խորհրդին, որ խաղաղութիւնը նորից չը խանգարուի։

Լոնդոն. մայիս 14. Համայնքների ժողովում, երէկ երեկոյ Սըր Ի. Գրեյ պատասխանելով մի հարցի, ասաց որ կառավարութիւնը լուր չունի թէ Ֆրանսական զօրքը մտնում է Անգլիայի պատկանող Նեղոսի հողերի մէջ։

Բերլին. մայիս 13. Ռայխստագը երէկ մերժեց կառավարութեան կողմից եղած այն առաջարկութիւնը որ ուրբաթ դնում ծխախոտի վրայ։ Ռեյխստագի մերժումը կատարելապէս կը վնասի 1895 կառավարութեան բիւդջէին։

Փարիզ. մայիս 13. Ֆրանսական 95-ի և 96-ի բիւդջէն ցոյց է տալիս 45 միլիոն ֆրանկի վնաս։ Առաջարկուել է նոր տուրքեր սահմանել այս վնասը լրացնելու համար։

Լոնդոն մայիս 14. «Times» հեռագիր է հրատարակում Կօբից յայտնելով որ Ժապոնիան շատ զղջացել է Լիաթունկի թերակղզին թողնելու առթիւ։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐ ՄԽԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ**, իր գրքահօր 50-ամեայ յօբելեանի առթիւ, հիմնելու է մի արւեստագիտական արհեստանոց Այտնեան» անունով. արհեստանոցի նպատակն է հայ տղաներ բերել ամէն կողմից և ձեռագործ արհեստներ սովորեցնելով 3—4 տարուայ մէջ վարպետ հանել և ետ դարձնել։

Այդ նպատակի համար յանձաժողով է կազմած, որը և ընդունում է նուէրներ։

Նուէրները կարելի է հասցնել հետեւեալ հասցէով։

Au couvent des RR. PP. Mechitharistes.
VII/2 Mechitharistengasse.4
Vienne (Autriche)
1—3

## «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՐՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

«Հանդէս» առաջիկայ տարին կը հրատարակուի նոյն ծաւալով ազգի ճոխ և բազմակողմանի բովանդակութեամբ։

Բաժանորդագինն և այլ ամենայն պայմանք նոյն կը մնան։

Կը խնդրենք մեր բաժանորդներէն օր յապաղ նորոգել բաժանորդագրութիւնը, դիմելով մեր գործակալութեանց։ Հրատարակվում է Վիէննայում Մխիթարեան միաբանութեան խմբագրութեամբ։

Բաժանորդագին տարեկան 10 ֆրանկ

Հասցէ. Rédaction de la Revue «Hantess» Au Couvent des RR. PP. Méchitharistes à Vienne (Autriche)
VII/2 Mechitharistengasse 4.
1—3